ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Նարինե Նուշերվանյան

«ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ

Հիմնաբառեր. *Սփյուռք, հյուրընկալող երկիր, հայրենիք, քաղաքական ներուժ, սփյուռք-հայրենիք փոխհարաբերություններ, միջազգային քաղաքականություն, անդրազգային մակարդակ:*

ՄՈՒՏՔ

Ժամանակակից միջազգային հարաբերություններում սփյուռքները՝ որպես միգրացիոն գործընթացների արդյունք, դառնում են հզոր ռեսուրս պետությունների փոխգործակցության շրջանակում: Տեղի է ունենում սփյուռքների սոցիալ-քաղաքական դերի գնահատման փոփոխություն: Պետությունները, գնալով ավելի ու ավելի, ստիպված են իրենց ներքին և արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ հաշվի առնել միջազգային հարաբերություններում դերակատարություն ձեռք բերած գործոնի՝ սփյուռքի հետաքրքրությունները: Սփյուռքը ունակ է ոչ միայն մարտահրավեր նետելու ավանդական գործոններին, այլև դառնալու կարևոր դերակատար՝ պատմական հայրենիքի շահերը կյանքի կոչելու և՛ պետության ներսում, և՛ միջազգային հարթակներում:

Սփյուռքները, տիրապետելով ազդեցության ռեսուրսների, դիտարկվում են որպես ոչ պետական դերակատարներ, որոնք փոխազդում են պետական դերակատարների՝ հիմնականում իրենց հյուրընկալող երկրի և ծագման երկրի հետ: Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն, որովհետև հայտնվում են երկու երկրների միջև՝ կիսելով երկու մշակույթ, ունենալով զգայական կապ երկու ազգերում և պահպանելով սոցիալական կապեր երկու հասարակություններում[1]: Արդյունքում, սփյուռքները գնալով կամուրջի դեր են կատարում՝ կապելով իրենց «տունը» և հյուրընկալող երկիրը՝ դառնալով կարևոր կառուցվածքային տարր, որը ազդում է պետությունների քաղաքական գործընթացների զարգացման վրա: Ըստ այդմ, միջազգային հարաբերություններում սփյուռքը դրսևորվում է որպես անկախ քաղաքական սուբյեկտ **եռանկյունաձև մոդելի** շրջանակում՝ «սփյուռք-հյուրընկալող երկիր-հայրենիք» փոխհարաբերություններով [2], որոնք պայմանավորված են հայրենիքի և ընդունող երկրի առանձնահատկություններով, ինչպես նաև սփյուռքի ձևավորման հանգամանքներով: Ավելին, այս բարդ մոդելը հաճախ ներառում է միմյանցից տարբերվող ընդունող երկրների տարբեր պայմաններում ու իրավիճակներում հայտնված սփյուռքյան համայնքները: Արդյունքում, սփյուռքները հիմնականում ակտիվ գործունեություն են ծավալում հետևյալ հարթակներում՝ անդրազգային մակարդակ[3], ընդունող երկրի և հայրենիքի հետ ակտիվ կապերի հաստատման մակարդակ, տեղի համայնքի մակարդակ:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՎ ԵՐԿՐԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային հարաբերություններում հյուրընկալով երկրի և հայրենիքի հետ սփյուռքի հարաբերությունների և ազդեցությունների հնարավոր գործողությունները ներկայացրել է տեսաբան Մ. Էսմանը[4]: Ըստ նրա՝ այդ գործողություններն են՝

** Հոդվածը ներկայացվել է 08.01.2020 թ ., գրախոսվել՝ 04.03.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Don Handelman, Diasporas and International Relations, Youly Diamanti-Karanou, Nov 1, 2015, https://bit.ly/31K7Hyh , 25.09.2019:

[2] Տե՛ս Sheffer G., Diaspora Politics: At Home Abroad. New York, 2003, p. 196.

[3] Համագործակցություն այլ երկրներում բնակություն հաստատած միևնույն էթնիկ պատկանելիություն ունեցող խմբերի հետ:

1. շատ սփյուռքյան համայնքների անդամներ՝ հատկապես նրանց սերունդները, պահպանում են անդրազգային գոյություն,

2. սփյուռքները կարող են փորձել ուղղակի գործողության միջոցով ներազդել ծագման երկրի իրադարձություններին,

3. սփյուռքները փորձում են ազդել ընդունող երկրի կառավարության կամ միջազգային կազմակերպությունների վրա՝ գործելու հոգուտ կամ ընդեմ հայրենի երկրի կառավարության շահերի,

4. հայրենիքի կառավարությունը փորձում է օգտագործել սփյուռքը ի շահ իր ռազմավարական կամ տնտեսական նպատակների,

5. ճնշման ենթարկված սփյուռքը կարող է պաշտպանություն ակնկալել հայրենիքի կառավարությունից,

6. ընդունող երկրի կառավարությունը կարող է դիմել սփյուռքին՝ աջակցելու իր ռազմավարական և տնտեսական նպատակներին,

7. սփյուռքը նպաստում է հայրենիքի քաղաքական, կրթական և տնտեսական զարգացմանը,

8. հայրենիքի կառավարությունը սփյուռքի կողմից թշնամական գործողությունները զսպելու նպատակով կարող է դիմել ընդունող երկրի կառավարությանը,

9. ներկայումս բռնի գործողությունների սպառնալիքը՝ ահաբեկչական կազմակերպությունների կողմից, որոնցից շատերը կապված և ներշնչված են Ալ Կաիդայից, կասկած են նետում որոշ սփյուռքյան համայնքների վրա[1]:

Սփյուռքների գործունեության այս տեսակները Յ. Շեյնը և Ա. Բարթը բաժանում են երեք տիպի դերակատարության՝

1. Սփյուռքները կարող են լինել պասիվ դերակատարներ, երբ նրանք մասնակցում են միջազգային հարաբերություններին ոչ սեփական նախաձեռնությամբ: Դա կարող է տեղի ունենալ 3 տարբեր պատճառներով՝ *առաջին*. սփյուռքը կարիք ունի արտաքին օգնության ընդունող երկրի հետ հարաբերություններում (օրինակ, Աջակցել Սիրիայի հրեաների իմիգրացիայի թույլտվության գործին): *Երկրորդ*. հայրենիքը կարող է ձգտել ներկայացնել իր ազգը, ներառյալ պետության սահմաններից դուրս ապրողներին՝ անկախ այդպես ներկայացվելու սփյուռքի անդամների ցանկությունից: *Երրորդ.* սփյուռքները չեն կարողանում վերահսկել իրենց կարգավիճակը՝ որպես հայրենիքի ընկալվող անդամներ, և այդպիսով օգտագործվում են հայրենի երկրի միջազգային հարաբերությունների գործում: Դրան օրինակ կարող է ծառայել ահաբեկչական հարձակումը՝ 1994 թվականին ենթադրաբար Իրանի աջակցությամբ Հոզբոլաի խմբավորման հարձակումը Արգենտինայի հրեա համայնքի վրա Լիբանանի կոնֆլիկտի համատեքստում[2]:

2. Սփյուռքները կարող են լինել ակտիվ դերակատարներ՝ ազդելով իրենց հյուրընկալող երկրի արտաքին քաղաքականության վրա՝ հոգուտ հայրենի երկրի: Այս երևույթի լավագույն օրինակը կարելի է տեսնել ԱՄՆ-ում, որտեղ, նույնիսկ ըստ որոշ կարծիքների, բազմաթիվ էթնիկական խմբերի լոբբիստական գործունեությունը բերել է ամերիկյան արտաքին քաղաքականության մասնատման: Ըստ Սամուել Հանթինգթոնի և Թոնի Սմիթի՝ սփյուռքների նեղ օրակարգը ԱՄՆ-ից դուրս իրենց ժողովուրդների բարրօրության համար ստորադասում է «հանրային բարիքը»: Սակայն ուրիշները կասկածի տակ են դնում այդ կարծիքը և սա համարում են ամերիկյան բազմակարծության մաս և հակակշիռ ավանդական քաղաքական վերնախավին[3]:

3. Սփյուռքները կարող են ակտիվ դերակատարներ լինել՝ ազդելով իրենց հայրենիքների արտաքին քաղաքականության վրա: Սփյուռքները, հասնելով տնտեսական և քաղաքական հզո-

---

[1] *Տե՛ս Esman M., Diasporas in the contemporary World, Cambridge, Polity Press, 2009, pp. 121-132. Տե՛ս նաև Վարդանյան Հ., Տեսաբանական ակնարկ Սփյուռքի քաղաքական դերակատարության շուրջ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2018, էջ 255-258:*

[2] *Տե՛ս Shain Y., Aharon B., Diasporas and international relations theory, International Organization, vol. 57, Summer 2003, p. 453.*

[3] *Տե՛ս նույն տեղում, p. 454.*

ության, կարող են լինել իրենց հայրենիքների զինվորագրման, ֆինանսավորման և զինման աղբյուր, այսպիսով կարող են ունենալ որոշիչ դեր իրենց հայրենիքների՝ կռիվը շարունակելու կամ հարմարվողական քաղաքականության որոշում կայացնելու մեջ: Սփյուռքների ազդեցությունը հայրենիքում կարող է պայմանավորված լինել տնտեսական միջոցներով՝ ազգային ծրագրերում ներդրումների կամ քաղաքական ավանդի տեսքով: Օրինակ, Իսրայելում սփյուռքի քաղաքական աջակցությունը լրջագույն ազդեցություն է ունեցել ընտրական արդյունքների վրա[1]:

ՍՓՅՈՒՌՔ-ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿԻՐ[2] ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սփյուռքի արդյունավետ գործունեությունն ընդունող երկրում ազգային ինքնության պահպանման և տվյալ հասարակության միջավայրում ինտեգրման փոխշահավետ մակարդակն է: Սփյուռք-ընդունող երկիր հարաբերությունների բարդ գործընթացը, որը կարելի է դիտարկել շրջափուլերի տեսքով՝ *ընդունող երկրում բնակության հաստատում, ինքնության արդիականացում, ինտեգրման փոխշահավետ մեխանիզմների մշակում և արդյունավետ կիրառում*, լիարժեք իրագործման է հասնում ընդունող երկրում սփյուռքի *ինստիտուցիոնալ կոնսոլիդացիայի փուլում*[3]: Այս դեպքում սփյուռքն իր մասնակցությունն է ունենում ընդունող երկրի քաղաքական օրակարգում՝ վեր հանելով հայրենի երկրի համար առանցքային խնդիրները: Ընդ որում, ինստիտուցիոնալ կոնսոլիդացիան ենթադրում է ազդեցիկ լոբբի, ներգրավվածություն հասարակական և քաղաքական կազմակերպություններում: Արդյունքում, սփյուռքի գործունեության ձևերին[4] անդրադառնալիս որպես անբաժանելի բաղադրիչ պետք է նշենք քաղաքական ներգրավվածությունը (“diaspora as political orientation”), որը պայմանավորված է քաղաքական խնդիրների լուծման նպատակով սփյուռքի ինստիտուցիոնալ կազմակերպվածությամբ: Այն ոչ միայն կօգնի խուսափել մեկուսացումից, արդյունավետորեն պայքարել սփյուռքի ձուլմանն ուղղված քաղաքականության կամ դրան նպաստող հանգամանքների դեմ, այլև կնպաստի մասնակցելու ընդունող երկրի ներքաղաքական կյանքին, դառնալու այդ երկրի լիարժեք քաղաքացի, արդյունավետությամբ լուծելու համայնքային խնդիրները, ինչպես նաև աջակցելու հայրենի երկրի ներքին և արտաքին քաղաքական խնդիրների շահավետ լուծմանը: Պարզ է, որ սփյուռքները կարող են ազդել ընդունող երկրների արտաքին քաղաքականության վրա միայն այն ժամանակ, երբ սփյուռքի քաղաքական նպատակները չեն հակասում ու չեն սպառնում ընդունող պետության ազգային շահերին: Ըստ Գ. Շեֆֆերի նման մոտեցման առավել հակված են իրենց պետության հետ կապված սփյուռքները, որոնք, առավել հաճախ նախընտրում են գործել հյուրընկալող երկրի օրենքների և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Իսկ այն համայնքները, որոնց էթնիկ ներկայացուցիչները չունեն պետականություն, առավել հակված են ներգրավվածության ոչ կոնվենցիոնալ մեխանիզմների, երբեմն էլ՝ անօրինական մոտեցումների[5]:

Այնուամենայնիվ, միշտ պետք է հաշվի առնել տարածաշրջանների տարբերությունները: Գործունեության այն մոտեցումները, որոնք, օրինակ, հայկական սփյուռքը կիրառում է բարեկամական Ֆրանսիայում, կարող են չաշխատել անգամ չեզոք Կանադայի տարածքում: Անգամ հավասարապես բարեկամական պետություններում խաղի կանոնները տարբեր են: Դիտենք հրեական սփյուռքի օրինակով: Նրանք տարբեր պետություններում ունեն տարբեր համայնքների ամբողջական ցանց, որի համընդհանուր գործողությունները համապատասխանում են և՛ իրենց, և՛

---

[1] *Տե՛ս նույն տեղում:*

[2] *Օգտագործվում է նաև «հյուրընկալող երկիր» ձևը. համարվում է այն երկիրը, որտեղ ձևավորվել են սփյուռքյան համայնքները՝ ստեղծելով իրենց առանձին կառուցվածքային դիմագիծը:*

[3] *Տե՛ս Թորոսյան Տ., Սարադյան Մ., Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Ե., 2017, էջ 76-81:*

[4] *Տե՛ս Cohen R., Diaspora: Beyond the Jewish Experience. The 15th Jacob Gitlin Memorial Lecture Public Lecture for the Jacob Gitlin Library, Cape Town 8001, South Africa, 2003, pp. 7-8.*

[5] *Տե՛ս Sheffer G., The Diaspora Phenomenon in the Twenty-First Century: Ideational, Organizational, and Behavioral Challenges, Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multilevel Politics of Diaspora and Transnational Identity, Edited by Totoricaguena G., Nevada, 2007, p. 209.*

Տե՛ս նաև Diaspora Politics: At Home Abroad, Cambridge University Press, 2003, pp. 154-160.

Իսրայելի շահերին: Հրեական սփյուռքի հիմնական արդյունքը՝ Իսրայելի վերաստեղծումն է որպես անկախ պետություն: Այդ թվում՝ պահպանվում է պետության և ամբողջ աշխարհի հրեական համայնքների միջև կապը: Հրեական սփյուռքի աշխատանքի դրական արդյունքը ուժեղ համայնքների գործունեության շնորհիվ է, որի անդամները հաջողությամբ մրցակցում եմ այլ ազգային խմբերի ներկայացուցիչների հետ:

Նշենք նաև, որ սփյուռքյան կառույցների հարատևությունը և էթնիկ, մշակութային, կրոնական կամ ազգային ինքնությունները պահպանելու արդյունավետությունը մեծապես կապված է հյուրընկալող երկրի կառավարության՝ հայրենի երկրի հանդեպ ունեցած ընկալումից (բարեկամ կամ թշնամի), ինչպես նաև էթնիկական բազմազանության մասին հյուրընկալող հասարակության փոփոխվող ընկալումներով[1]:

Ընդունող երկրում որոշակի դիրքեր ունենալով՝ այս խմբերը սկսում են ազդել, առաջին հերթին, երկրի ներքին քաղաքականության վրա՝ հիմնականում համայնքի շահերը բավարարելու տեսանկյունից: Այսպիսի դիրքորոշումը սկսում է ներթափանցել նաև երկրի քաղաքական այլ գործընթացների մեջ:

Մյուս կողմից, ընդունող երկրում հայրենանպաստ նախաձեռնություններին ուղղված սփյուռքի գործունեությունը որոշակի լծակ կարող է ծառայել նաև հենց ընդունող երկրի համար: Այս դեպքում սփյուռքը կարող է հանդես գալ որպես քաղաքական կամուրջ ընդունող երկրի և հայրենիքի միջև: Ընդ որում, ընդունող երկիրը կարող է սփյուռքի ազդեցիկ գործոնը օգտագործել միջազգային հարաբերություններում ցանկալի արդյունքի հասնելու համար: Ինչպես, օրինակ, 1960-ական թթ. ԱՄՆ-ի կողմից բարձրաձայնվեց Կուբայի սփյուռքի շահերը, ինչը նպատակ ուներ Ֆ. Կաստրոյի վարչակազմի դեմ պայքարում համախմբել ԱՄՆ-ում ապրող կուբացիներին: Կամ նույն ժամանակաշրջանում դիտարկենք պաղեստինցիների նկատմամբ արաբական կառավարությունների վարած քաղաքականությունը՝ նպատակ ունենալով համախմբել պաղեստինցիներին Իսրայելի դեմ[2]: Այս շրջանակում սփյուռքը փաստորեն կարող է նաև խոցելի լինել՝ հյուրընկալող երկրի կողմից դրդրվելով քաղաքական ակտիվության: Ինչպես, ԱՄՆ-ն շատ հաճախ օգտագործում է սփյուռքների ներուժը քաղաքական մեսիջներ ուղարկելու համար[3]:

Այսպիսով, հաշվի առնելով հյուրընկալող երկրի հետ սփյուռքի փոխազդեցության ձևերն ու հնարավոր հետևանքները՝ պարզ է, որ փոխշահավետ գործունեության ծավալման համար երկու կողմերի միջև նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ: Իսկ հյուրընկալող երկրում ապրելով ու կազմակերպակառուցվածքային բնութագիր ձեռք բերելով՝ սփյուռքը ինքստինքյան պարտավորվում է չհակադրվել տվյալ երկրի ներքին ու արտաքին քաղաքականությանը, այլ ընդհակառակը, շահավետ պայմանները օգտագործելով, հասնել համայանքային կամ ազգային խնդիրների բարձրաձայնմանն ու լուծմանը:

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսօր միջազգային հարաբերություններում հաճախ նկատելի է, որ մի շարք երկրների զարգացման համար ճիշտ քաղաքականության պարագայում սփյուռքը կարևոր ռեսուրս է դառնում, ուստի այս պարագայում սփյուռքը կարելի է դիտարկել որպես երկրի զարգացման ներուժ: Հայրենիքում սփյուռքի ներգրավվածության որակը և ծավալը մեծապես կախված են սփյուռքի համայնքների չափից, կազմից և էապես պայմանավորված են սփյուռքյան ինստիտուտների համայնքային ինքնություն կերտելու և պահպանելու ունակությունից[4]: Հայրենիքի քաղաքականության մեջ ներգրավվելու հակվածությունը առավել չափելի տեսնելու համար պետք է հաշվի

---

[1] *Տե՛ս Shain Y., Ethnic Diasporas and U.S. Foreign Poilicy, Political Science Quarterly, Vol. 109, No. 5 (Winter, 1994-1995), p. 815.*

[2] *Տե՛ս Safran W., Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 1, № 1, Spring 1991, p. 93.*

[3] *Տե՛ս Shain Y., Ethnic Diasporas and U.S. Foreign Poilicy, Political Science Quarterly, Vol. 109, No. 5 (Winter, 1994-1995), p. 815.*

[4] *Առավել մանրամասն տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելները, Ե., 2018:*

առնել միջազգային հարթակներում քաղաքական տենդենցները, միգրացիոն տարբեր ալիքները, ձուլման աստիճանը և քաղաքական ինքնությունը հյուրընկալող երկրում, ինչպես նաև հայրենիքի միգրացիոն քաղաքականությունը:

Հայրենիքում սփյուռքի ներգրավածության առաջնային ձևերից է նյութական միջոցների ներդրումը՝ սկսած դրամական հատկացումներից մինչև բարեգործական՝ հագուստ և սնունդ: Ֆինանսական միջոցների հատկացումների նպատակներն ու շարժառիթները կարող են լինել տարատեսակ՝ աջակցություն ոչ միայն հայրենիքում ապրող իրենց ընտանիքներին, այլև կուսակցությունների ձևավորմանն ու կայացմանը, ազգային կամ պետական մակարդակով իրականացվող ծրագրերին, անգամ ահաբեկչությանը կամ բռնի բախմանը հայրենիքում: Սփյուռքի միությունների գլոբալ ցանցերը երբեմն ներգրավվում են հայրենիքում զանգվածային բողոքների և գիտակցության բարձրացմանը նպաստող խնդիրների լուծմանը. ինչպես, 1999-ին քրդական առաջնորդ Աբդուլլահ Օջալանին հետևելով՝ կազմակերպվեցին զանգվածային ցույցեր աշխարհի տասնյակ վայրերում՝ քրդական խնդիրները հասցնելով ամբողջ աշխարհին[1]: Սփյուռքի հետաքրքրությունների և աջակցության կշիռն ու ուժը երբեմն ուղղվում է նաև պետական մարմիններին, նախարարություններին կամ կառավարությանը: Ակնառու օրինակ է, երբ արտերկրի խորվաթները 1990 թ. չորս միլիոն դոլար նվիրաբերեցին Ֆրանջո Տուջմանի ընտրություններին և հետագայում պարգևատրվեցին պառլամենտում ներկայացուցուցչամբ. 120 տեղից 12-ը հատկացվել է սփյուռքում ապրող խորվաթներին, ավելին քան հատկացվել է Խորվաթիայում ապրող ազգային փոքրամասնություններին[2]:

Սփյուռքից եկող ֆինանսական հոսքերի պահպանման համար հայրենիքի քաղաքական գործիչները հաճախ համերաշխության են ձգտում իրենց երկրից արտագաղթած քաղաքացիների հետ: Նման օրինակ է, երբ Իռլանդիայի նախագահ Մարի Ռոբինսոնը 1990 թվականին իրեն հռչակեց արտերկրում իռլանդական ընտանիքի առաջնորդ: 2000 թ. Վինչենտ Ֆոքսի Կալիֆորնիայում մեքսիկացիների շրջանում քարոզչական արշավի ժամանակ հայտարարեց, որ ինքը կլինի առաջին նախագահը, ով «կկառավարի 118 միլիոն մեքսիկացիների»՝ 100 միլիոն Մեքսիկայում և 18 միլիոն այլ երկրներում ապրող: Իսկ 2002 թվականին Քենիայի նախագահ Մվայ Կիբակին իր երդմնակալության խոսքում դիմեց արտերկրում բնակվող քենիացիներին՝ «միանալ ազգաշինության գործին»[3]:

Ինչպես հյուրընկալող երկիրը կարող է սփյուռքը միջոց ծառայեցնել միջազգային հարաբերություններում սեփական քաղաքական գործողությունների շրջանակում, այնպես էլ հայրենի պետությունը անմասն չի մնում նման մոտեցումից: Հայրենի պետությունը ակտիվորեն ձգտում է սփյուռքի ռեսուրսները օգտագործել սեփական ֆինանսական և ինֆորմացիոն հնարավորությունների համար: Սփյուռքը նաև ընդունակ է կառուցել ցանցեր, որոնց մեջ հայրենի պետությունը դառնում է բազմաթիվ օղակներից մեկը[4]:

Մյուս կողմից միգրանտ ուղարկող երկրներում կառավարությունը երբեմն դժվարությամբ է ընդունում երկքաղաքացիության փաստը, քանի որ սա ունի իր թերությունը: «Բացակայող» քվեարկությունը երբեմն կարող է մեծ ազդեցություն ունենալ: Արտագաղթած ձայները հատկապես մտահոգում են մեծ սփյուռք ունեցող երկրներին: Օրինակ, դա զգացվել է 2005 թ. հունվարին կայացած Իրաքի ընտրությունների ժամանակ, երբ ակնկալվում էր, որ ավելի քան մեկ միլիոն արտագաղթած իրաքցի մեծ ազդեցություն կունենա ընտրությունների վրա, սակայն իրականում քվեարկելու իրավունք ուներ նրանց միայն մեկ չորրորդը: Եղել են նաև դեպքեր, երբ արտերկրում

---

[1] *Տե՛ս Steven Vertovec, The Political Importance of Diasporas, Centre on Migration, Policy and Society Working Paper No. 13, University of Oxford, 2005, https://bit.ly/2Ju8wot (մուտք՝ 14.10.2019):*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Տե՛ս Боришполец К., Механизмы взаимодействия государства с национальными диаспорами, Ежегодник Института международных исследований, М. 2012, ст. 82-83.*

գտնվող քաղաքացիները զանգվածաբար վերադարձել են ընտրություններին մասնակցելու համար՝ երբեմն քաղաքական ուժի կողմից ճանապարհածախսի փոխհատուցմամբ. այդպիսի դեպքեր եղել են, օրինակ, Թուրքիայում, Իսրայելում[1]:

Արդյունքում սփյուռք-հայրենիք հարաբերությունները քննելիս պետք է հաշվի առնել այն, որ հայրենիքի վերաբերմունքի սփյուռքի նկատմամբ կարող է երկակի լինել՝ անկախ մշտական կապի առկայությունից: Միշտ չէ, որ հայրենիքը աջակցում է սփյուռքին և նմանապես էլ միշտ չէ, որ սփյուռքը անվերապահորեն աջակցում է հայրենիքի կառավարությանը: Ըստ Օ. Ռայեյնի՝ գոյություն ունի այս հարաբերությունների պետական կարգավորման մի քանի ձև՝ ***կրոյական,*** երբ հարաբերությունները կարգավորվում են ըստ առաջարկի և պահանջարկի ***խնամատար***, երբ հայրենիքն աջակցում, պաշտպանում և կանոնակարգում է նոր ձևավորվող սփյուռքյան կապերը, ***ստնտուական,*** երբ հայրենիքը հայտնաբերում է պոտենցիալ առաջնորդներին և նրանց առաջ ճանապարհ հարթում՝ միևնույն ժամանակ սփյուռքին թողնելով տիրոջ իրավունքը, ***մշակող,*** երբ հայրենիքն աշխատում է առկա սփյուռքյան կազմակերպությունների և ցանցերի հետ, ***կերտող,*** երբ հայրենիքն ուղղակիորեն ստեղծում և կառավարում է սփյուռքյան նախաձեռնությունները[2]:

Չանտեսելով սփյուռքի ֆինանսական աջակցության կարևորությունը՝ նշենք, որ սփյուռքի ինստիտուցիոնալ կայացման փուլում հատկապես նշանակալի է հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների քաղաքական ոլորտը, ինչի շնորհիվ սփյուռքը կարող է ծառայել որպես լծակ երկրի սահմաններից դուրս հայրենիքի ներքին և արտաքին խնդիրների լուծման, ինչպես նաև նոր ռազամավարական նախագծերի իրագործման հնարավորությունները ընդլայնելու համար: Որոշ պետություններ իրենց սփյուռքների հետ համագործակցության համակարգման, ինչպես նաև երկրի սահմաններից դուրս համայնքի իրավունքները պաշտպանելու նպատակով ստեղծել են հարաբերությունները կարգավորող քաղաքական կառույցներ: Օրինակ, դեռևս 1990 թ. Սփյուռքի նախարարություն ստեղծվել է Իսրայելում, իսկ 2008 թ.՝ Հայաստանում և Վրաստանում: Այսպես, եկամտի և զարգացման աղբյուր, արտասահմանում հայրենիքի շահերի առաջխաղացման քաղաքական լծակ, էթնոազգային ամբողջության մաս լինելու նկատառումներից ելնելով՝ ՄԱԿ-ի անդամ երկրների կեսից ավելին ստեղծել են սփյուռքի հետ համագործակցութան հատուկ կառույցներ[3]:

Արդյունքում, սփյուռքները, հաճախ համաձայնության գալով հայրենիքի առջև ծառացած արտաքին քաղաքականության հարցերի շուրջ, մոբիլիզացվում են՝ ի աջակցություն այդ քաղաքականության: Ավելին, ժամանակակից սփյուռքները հայրենիքից նաև պահանջում են ճանաչել իրենց կարգավիճակը՝ որպես հավասարազոր սուբյեկտի, որի ազդեցությունից է կախված պետության դիրքը միջազգային հարաբերությունների համակարգում[4]: Երբեմն սփյուռքները հակված են թշնամության առավել ուժեղ զգացում ունենալու իրենց հայրենիքի պատմական թշնամիների նկատմամբ՝ առավելագույն էթնո-ազգային տեսլական և, հայրենակիցների հետ համեմատած, ավելի մեծ տարածքային պահանջներ ունենալով: Հետևաբար, նրանք լոբբինգի հակված են ոչ թե իրենց ծագման երկրի քաղաքական ղեկավարության համար, այլ նրա, ինչը համարում են կարևոր[5]: Հայրենիքի և սփյուռքի միջև առկա քաղաքական անհամաձայնությունների օրինակ են՝ Հյուսիսային Իռլանդիայի վերաբերյալ քաղաքական տարաձայնությունները Իռլանդիայի կառավարության և Ամերիկայում ապրող իռլանդացիների կամ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Հայաստանի կառավարության և ամերիկահայերի միջև:

Թել-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շեյնը ուսումնասիրելով ԱՄՆ ներքին քաղաքականության վրա սփյուռքի հնարավոր ազդեցությունը, նշել է. «ԱՄՆ պատմական սփյուռքները ամուր կապված էին իրենց երկրի քաղաքական գործընթացներին և հաճախ իրենց դիտարկում

---

[1] Տե՛ս Vertovec S., The Political Importance of Diasporas, Centre on Migration, Policy and Society Working Paper No. 13, University of Oxford, 2005, https://bit.ly/2Ju8wot, (մուտք՝ 02.12.2019):

[2] Տե՛ս Բեժանյան Գ., նշվ. աշխ., էջ 223:

[3] Տե՛ս Թորոսյան Տ., Սարաղյան Մ., նշվ. աշխ., էջ 75:

[4] Տե՛ս Полоскова Т., Современные диаспоры (внутриполитические и международные аспекты). М., 2002, с. 199.

[5] Տե՛ս Shain Y., The Role of Diasporas in Conflict Perpetuation or Resolution, SAIS Review, Volume 22, Number 2, Summer-Fall 2002, pp. 120-123.

էին որպես արտերկրում հայրենի երկրի ներկայացուցիչ»[1]: Որոշ առավել հին սփյուռքներ, ինչպես հրեաները, հույները, իտալացիները, հաճախ իրենց պատմական հայրենիքներում «հպանցիկ են ապրում», և Հայրենի երկրների քաղաքականությունը ԱՄՆ-ում կարևոր է սփյուռքի ներկայացուցիչների քաղաքական ինքնության համար: Որովհետև նրանք ավելի հավանական է, որ կաջակցեն (կամ ակտիվորեն կհակադրվեն) հայրենի երկրում գոյություն ունեցող ռեժիմների այն քաղաքականություններին, որոնք համընկնում (կամ հակադրվում) են ամերիկյան լիբերալիզմին և կամ ԱՄՆ արտաքին քաղաքական նպատակներին: Սփյուռքները հակված են այնպես ընդունել իրենց հայրենիքը, որ դա չդառնա սպառնալիք իրենց ամերիկյան բազմակարծության ինքնությանը[2]:

Այսպիսով, նկատում ենք, որ պետություն ունեցող սփյուռքները, հատկապես ձևավորման շրջանում, գրեթե գտնվում են հայրենի երկրի ղեկավարման ներքո. հաճախ պետությունն ինքն է ստեղծում սփյուռքյան կառույցներ, հովանավորում դրանց՝ այդ կերպ նպաստելով սփյուռքի ձևավորմանը, կայացմանն ու զարգացմանը (Ադրբեջան): Առավել հին ու կայացած սփյուռքները գործունեության այլ մոդել ունեն. այս դեպքում, ինչպես տեսանք, հարաբերությունները կարգավորվում են ըստ հյուրընկալող երկրի, հայրենիքի հարաբերությունների, միջազգային հարաբերություններում առկա քաղաքականության և այլ հանգամանքներով (Հայաստան, Իսրայել): Մյուս կողմից էլ, չնայած մշտական կապի առկայությանը, հայրենիքի վերաբերմունքը սփյուռքի հանդեպ կարող է լինել անորոշ և երկակի: Միշտ չէ, որ հայրենիքի կառավարությունն անվերապահորեն աջակցում է սփյուռքին: Նմանապես միշտ չէ, որ սփյուռքն աջակցում է հայրենիքի կառավարությանը:

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Սփյուռքը ի սկզբանե ձևավորվում է որպես համայնք՝ անտեսելով գոյություն ունեցող սահմանները և ձգտելով համախմբեր մարդկանց մշակութային հիմքի հիման վրա (համերաշխություն, ինքնություն, առասպելներ): Այդ իսկ պատճառով սփյուռքի գործունեությունը կրում է անդրազգային բնույթ[3], իսկ ազդեցությունը իրականացվում է անդրազգային մեխանիզմներով: Այս կերպ սփյուռքները համապատասխանում են համաշխարհային քաղաքականության ոչ պետական (անդրազգային) դերակատարների հայտնի չափանիշներին, և ինչպես Խ. Թոլոյանն է նշում, «սփյուռքը անդրազգային պահի օրինակելի համայնք է»[4]:

Եթե մինչև 1970-ական թթ. սփյուռքագիտական ուսումնասիրությունները սահմանափակվել են հրեական, հայկական, մասամբ նաև աֆրիկյան և չինական սփյուռքի պատմությանը, առանձին շերտերին, համայնքներին, ինչպես նաև հայրենիք-սփյուռք հարաբերություններին և հայրենադարձությանն առնչվող հարցադրումներով, ապա 1990-ական թթ. սկսվում է անդրադարձ կատարվել ոչ միայն ավանդական սփյուռքների, այլև վերջին երեսուն տարիների ընթացքում ձևավորված «նոր» համայնքների վերլուծություններին՝ շեշտադրելով սփյուռքի անդրազգային հատկանիշները: Որպես օրինակ հիշատակենք 1991 թ. Կանադայում պրոֆեսոր Խաչիկ Թոլոյանի խմբագրությամբ հրատարակվող «Սփյուռք. անդրազգային հետազոտությունների ամսագիրը» (Diaspora: A Journal of Transnational Studies)[5] կամ 2011 թ. Նյու Դելիում հրատարակվող «Սփյուռքագիտական հետազոտություններ» (Diaspora Studies) ամսագիրը՝ նվիրված սփյուռքյան անդրազգային ցանցերի ուսումնասիրությանը՝ որպես միջազգային հարաբերությունների ուշագրավ գործոն[6]:

---

[1] Տե՛ս Shain Y., Ethnic Diasporas and U.S. Foreign Poilicy, Political Science Quarterly, Vol. 109, No. 5 (Winter, 1994-1995), p. 814

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Bauböck R. and. Faist T., Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods, Amsterdam University Press, 2010, pp. 14-16.

[4] Tölölyan K., The Nation-State and Its Others: In Lieu of a Preface, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 1, Number 1, Spring 1991 p. 5-6.

[5] Տե՛ս Վարդանյան Հ., Սփյուռքի սահմանումը և եվրոյթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեոլեոյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, Ե., 2016, № 2 (8), էջ 95-108:

[6] Տե՛ս Բեժանյան Գ., Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2013, № 1, էջ 211:

Որպես սոցիալական ձև[1]՝ սփյուռքի որոշ առանձնահատկություններ հաընկնում են անդրազգային համայնքի հատկանիշներին: Հետազոտողներ Մ. Կեկը և Կ. Սիկինգը նշում են, որ անդրազգային դերակատարները, հանդիսանալով ազդող ուժ կոնտրետ պետական կամ հասարակական կառույցների վրա, բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝ հաղորդակցման միջոցների հնարամիտ կիրառում, փոփոխությունների հասնելու հնարավորություն, վստահություն, քաղաքական ռազմավարության սկզբունքային համադրություն՝ ներառյալ այլ դերակատարների հետ կոալիցիայի կազմում[2]: Անդրազգային դերակատարների համար կարևոր է կառավարության որոշումներով ընդունված գործընթացներում ներգրավվածություն ձեռք բերել, սակայն որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը ոչ միշտ է ունենում նույն ազդեցությունը: Մատնանշվում են 3 հնարավոր ուղիներ, երբ անդրազգային դերակատարները ազդում են բազմակողմ բանակցությունների վրա.

- այնպիսի հզոր պետությունների, ինչպիսին է, օրինակ, ԱՄՆ-ը, ներքին հասարակությունների շրջանում լոբբիինգի միջոցով օգտագործելով «երկու մակարդակների խաղի» մեխանիզմը և փոփոխելով պետության նախապատվությունները,
- միջազգային կազմակերպությունների հետ կոալիցիաների միջոցով ճնշելով պետություններին «վերևից» և «ներքևից». այս ուղին հատկապես շեշտված է ԵՄ-ում,
- կոալիցիաներ կառուցելով փոքր պետությունների հետ՝ վերջիններիս տրամադրելով գիտելիք և «ինֆորմացիոն ուժ»[3]:

Անդրազգային փոխազդեցությունների հայեցակարգը կիրառվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ ըմբռնումը ենթադրում է, որ համայնքի անդամները ներգրավված են իրավական անդրազգային կառույցներում, քաղաքական կուսակցությունների կամ հասարական կառույցների անդամներ են: Իսկ լայն ըմբռնմամբ, բավական է, որպեսզի սփյուռքի ներկայացուցիչները նման կուսակցությունների ու կազմակերպությունների միջոցառումների մասնակիցը լինեն: Ըստ այդմ, նեղ իմաստով, անդրազգային փոխազդեցությունները կանոնավոր և կարգավորված բնույթ են կրում, իսկ լայն իմաստով՝ գործողությունների և հետաքրքրությունների պատահական համադրում են ներկայացնում[4]:

Ինչպես նշում են Յոսի Շեյնը և Թամարա Քոֆման Վիթեսը, սփյուռքի էթնիկ համայնքները միջազգային համակարգում համարվում են «անխուսափելի» և «էնդեմիկ» տարր, հետևյալ պատճառներով.

1. նախ հյուրընկալող պետության կազմում յուրաքանչյուր սփյուռք ինքնակազմակերպվելով կարող է առավելագույնի հասցնել իր քաղաքական ազդեցությունը,
2. սփյուռքները կարող են էական ճնշում գործադրել հայրենիքի ներքաղաքական ասպարեզում՝ սփյուռքին հուզող արցերի շուրջ,
3. կարող են համագործակցել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ գործնականում շրջանցելով հայրենիքի ու հյուրընկալող երկրի կառավարությունները[5]:

Սփյուռքները, արդյունքում, ընկալվում են որպես անդրազգային քաղաքական սուբյեկտներ, որոնք գործում են «ամբողջ ժողովրդի անունից» և ունակ են հայրենիքից և հյուրընկալող

---

[1] Ս. Վերթովեքը սփյուռքը դիտարկում է որպես սոցիալական ձև՝ ընդգծելով գլոբալ տարակենտրոնացվածությունը և հավաքական ինքնությունը, ներքին կազմակերպական կառուցվածքը, բազմակողմանի հարաբերությունները սփյուռքյան համայնքների, հայրենիքի և ընդունող երկրի միջև, ինչպես նաև առանձնահատուկ տնտեսական ռազմավարության և քաղաքական օրակարգի առկայությունը Տե՛ս Vertovec S., Three Meanings of "Diaspora," Exemplified among South Asian Religions, A Journal of Transnational Studies, University of Toronto Press, Volume 6, № 3, Winter 1997, p. 278; Բեժանյան Գ., նշվ. աշխ., էջ 221:

[2] Տե՛ս Keck M.E., Sikkink K., Activist beyond borders: Advocacy Networks in International Politics. Cornell University Press, 1998, p. 2.

[3] Տե՛ս Zimmerli W., Richter K., Holzinger M., Corporate Ethnics and Corporate Governance, -Verlag Berlin Heidelberg 2007, pp. 266-269.

[4] Տե՛ս Østergaard-Nielsen E., The Politics of Migrants' Transnational Political Practices, International Migration Review, Vol. 37, No. 3, Transnational Migration: InternationalPerspectives (Fall, 2003), p. 761.

[5] https://en.wikipedia.org/wiki/Diaspora_politics , 15.12.2019 :

երկրից առանձին ու ինքնուրույն գործել: Փաստորեն, սփյուռքի դերի բարձրացումը քաղաքական համակարգում առաջացնում է մարտահրավեր արտաքին քաղաքականության մշակման ավանդական մոտեցումներին, որոնք հակված են շեշտը դնել երկկողմ՝ պետություն-պետություն հարաբերությունների, միջկառավարական կազմակերպությունների և համընդհանուր, մարդասիրական հասարակական կազմակերպությունների վրա[1]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, որպես ինքնության ուժեղ զգացողություն ունեցող մոբիլիզացված խմբեր՝ սփյուռքները կարող են մեծ դեր ունենալ ոչ միայն ներքին քաղաքականության՝ հյուրընկալող երկրի ու հայրենի երկրի, այլև միջազգային քաղաքականության մեջ՝ ազդելով և՛ ազգային արտաքին քաղաքականության, և՛ միջազգային կառույցների որոշումների վրա: Ուստի ոչ պակաս կարևոր են սփյուռքների միջազգային և միջհամայնքային ցանցի կապերը: Սփյուռքյան տարբեր խմբերի միջև փոխհարաբերություններ ձևավորելով՝ էթնիկ խմբի անդամները ձեռք են բերում հնարավորություն միասին լուծել մի շարք խնդիրներ, որոնք, ընդհանուր առմամբ, ազդում են երկու կողմերի վրա: Փոխադարձ քննարկումները գերակայող էթնիկ խմբի և այլ խմբերի հետ հարաբերություններին վերաբերող հարցերի մաս կարող են կազմել, սփյուռքների կառուցման հիմնախնդիրների վերաբերյալ հմտությունների փոխանակման և այլն: Վերջիվերջո, համընդհանուր էթնիկ հարցերի լուծումը առավել կարևորվում է: Եվ այստեղ սփյուռքին վիճակված է էթնոսի համար ճանապարհ դառնալ միջազգային տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում ամրապնդելու սեփական դիրքերը: Օրինակ, 1897 թ. Շվեյցարիայում հիմնված Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը, ի սկզբանե նպատակ ունենալով հրեա արհեստավորների, վաճառականների և այլ մասնագետների վերաբնակեցում Պաղեստինում, մշակված լոբբինգի միջոցով միջազգային մակարդակում միջոցներ էր ձեռնարկում միավորելու բոլոր հրեաներին[2]: Կամ հայ ավանդական կուսակցությունների կառույցների կազմակերպական աշխատանքը ինստիտուցիոնալ հիմք դարձավ ցեղասպանությունից հետո տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղութների ներքին և արտաքին կյանքը կազմակերպելու համար:

Нарине Нушерванян, ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА". Диаспоры, являясь мобилизованными группами, разделяющими сильную идентичность, могут играть значительную роль не только во внутренней политике принимающих государств и на родине, но и в международной политике, оказывая влияние как на национальную внешнюю политику, так и на решения международных организаций. Таким образом, в международных отношениях диаспора выступает в качестве самостоятельного политического субъекта в рамках трехсторонней модели отношений "диаспора - принимающая страна - родина", которые обусловлены особенностями родины и принимающей страны, а также обстоятельствами, в которых формировалась диаспора.

Статья напоминает теоретические подходы к политической роли диаспор в современных международных отношениях. Рассматриваются уровни и возможные взаимодействия между Родиной и диаспорой, страной пребывания диаспоры, транснациональные отношения. Подчеркивая роль диаспор не только в качестве транскоммунальной сети, но и в международных отношениях, автор показывает важность диаспор в международной политике. Статья представляет собой теоретическое эссе, сопровождаемое соответствующими примерами.

Ключевые слова: *диаспора, принимающая страна, родина, политический потенциал, отношения диаспоры и родины, международная политика, транснациональный уровень.*

---

[1] *Տե՛ս T. Lyons and Mandaville P., Diasporas in Global Politics, George Mason University. Center for Global Studies 2010.*
http://www.gmu.edu/centers/globalstudies/publications/rpbop/policybriefGMTPJune2010.pdf, (Մուտք՝ 20.11.2019):

[2] *Տե՛ս About the World Zionist Organization, https://www.wzo.org.il/Mission-Statement, (Մուտք՝ 18.11.2019):*

Narine Nushervanyan, "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS. As mobilized groups that share strong identity, diasporas can have significant role not only in the domestic politics of host states and homeland, but also in international politics, influencing both national foreign policy as well as decisions of international organizations. Hence, in international relations, the diaspora acts as independent political subject within the framework of the triangular model - "diaspora-host country-homeland" relations - which are conditioned by the peculiarities of homeland and host country, as well as by the circumstances in which the diaspora has been formed.

The article mentions the theoretical approaches to the diasporas' political role in modern international relations. It discusses the levels and possible actions among homeland-diaspora, diaspora-host country, transnational relations. Emphasizing the role of diasporas' not only as transcommunal network but also international relations, we underline the importance of diasporas in international politics. The article is a theoretical essay accompanied with according examples.

Key words: *Diaspora, host country, homeland, political potential, Diaspora-homeland relations, international politics, transnational level.*